ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆԻ ԱՐԵՎԻԿԻ
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ,գյուղ Արևիկ
Հեռ.094679444

12 մայիսի 2025թ.

«Աքսել» ՍՊԸ -ի
տնօրեն Արշակ Ղուկասյանին

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Հարգելի՛ պարոն Ղուկասյան

Տեղեկացնում ենք Ձեզ, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Արևիկի երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի կարիքների համար գույքի ձեռք բերման նպատակով հայտարարված մրցույթի արդյունքում, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Արևիկի երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի և «Աքսել» ՍՊԸ -ի միջև 2025 թվականի մարտի 19-ին կնքված N ՇՄԱՀԱՐ-ԳՀԱՊՁԲ-25/01-2 պայմանագիրը մասնակի /2-րդ, 4-րդ, 6-րդ չափաբաժինների մասով/՝ պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվել է՝ համաձայն պայմանագրի 2.1.7 կետի: Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով

սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում ենք, որ Ընկերության կողմից որակավորման և պայմանագրի ապահովման գումարները՝ 125000 /մեկ հարյուր քսանհինգ հազար դրամ/ ՀՀ դրամ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Արևիկի երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի «220375140591000» հաշվեհամարին վճարել՝ սույն ծանուցումը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում: Ձեր կողմից, սահմանված ժամկետում ապահովումները վճարելու դեպքում, գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշումը չի ներկայացնի լիազոր մարմին:

ՀՈԱԿ-ի Տնօրեն Ա.Մսրյան